

ՁձԻՌ Հայոց անցեալ, եւ մատամբքն  
 Հասեալ<sup>13</sup>, յօգոստոս մըտեալ.  
 Ձանցաւորս թողեալ, զսուտ կենցաղս լըքեալ.  
 մահու հնազանդեալ.  
 135 Օրերն իւր լըքեալ, եւ ս'տուեր կեանքն  
 սպասեալ, ի ստուգ կեանան փոխեալ.  
 Իսկ հոգին մաքրեալ, առ Աստուած սլացեալ,  
 ի լոյսն խառնեալ.  
 Սիոնին բարձրեալ, արժանաւորեալ,  
 ընդ հրեշտակն դասեալ.  
 Տիրութիւնքն մերժեալ, ցաւքն փարատեալ,  
 վիշտքն դադարեալ.  
 Քաղաքաց տասնեալ, յուսովն ըզմայլեալ,  
 տիրելովն բերկրեալ.  
 140 Բարեխօս կանգնեալ, աղբիւ տառապեալ,  
 որդեացս որբացեալ:  
 Բարեխօսութեամբ Սուրբ Հայրապետիս...:  
 (Մատենադարան Ս. Երուսաղէմի Ձեռ.  
 Թ. 1042, Թղ. 70 ա—73 ա):

Հրտ. ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՇԱՆԵԱՆ



ՍԻՄԵՈՆ ԳՊՐԻ ԼԵՀՈՑԻՈՑ

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂԵՆՈՐՈՒԹԵԱՆ Ի ԼՎՈՎԵ Ի  
 Կ. ՊՈԼԻՍ, Ի ՀՈՍՄ, Ի ՄՈՒՇ ԵՒ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ  
 ՅԱՄՍՆ  
 1608—1619:

ՅԱԻԵԼՈՒԱԾ՝ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԱՆՅՔ Ի ԼԵՀՍ  
 (1621—1635)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԳԻՐ

(Շարունակութիւն):

Ս. ՊՕՂՈՍ

Եւ այլ օրն գնացաք ուխտ ի սուրբ Պօ-  
 ղոս, զի էր ի քաղաքէն դուրս միլ մի հեռու:  
 Եւ իբրեւ ելաք պարսպէն ի դուրս, բազում  
 վանորայս տեսաք յաջմէ եւ ահեկէ զճանա-  
 5 պարհայն: Եւ հասեալ կէս ճանապարհն տե-

<sup>13</sup> 6 + 100 + 20 + 1000 + 3 = 1129 (1680):

սաք մատուռ մի սքանչելի. եւ դռան վերեւն  
 զՊետրոս եւ զՊօղոս կոխած, զի դմբիանս  
 համբուրէին: Եւ ասին թէ այս այն է զի յոր-  
 ժամ տանէին զՊօղոս զլիսատել: Հանդիպեցաւ  
 Պետրոսի. եւ տեսեալ զմիմիանս՝ լացին բա- 10  
 զում ժամս եւ զբկախառն ողջունիւ համ-  
 բուրեալ զմիմիանս՝ հրաժարեցան. զոր այժմ  
 այն տեղն եկեղեցի է: Եւ ինչ սրբոյ անունն  
 եկեղեցի լինի, զայնոր ամէն տնօրինականքն  
 կու հանեն, զի ախմարքն իմանան զէութիւն 15  
 բանին. զի որչափ որ աճամի մարդ լինի եւ  
 զիւր չի գիտնայ, կու գիտենայ: Եւ մտեալ ի  
 սուրբն Պօղոս. եւ էր հին՝ դեռ Կոստանդիա-  
 նոսէ մնացեալ. եւ ասին թէ երբ զսուրբ Պե- 20  
 տրոս կատարեն՝ զայն պիտի սկսնուն նորոգել:  
 Եւ մերձ դրսի դռանն էր խորան սրբոյն Դիո-  
 նէսիոսի. անդ երկրպագեցաք. եւ միւս գիհն  
 էր խորան. եւ զբաժ էր թէ աստ է մարմին  
 Ոստիանէ կուսի: Եւ մեծ հրաշք եղեւ ի զլիսա- 25  
 տունն Դիոնէսիոսի. զի յորժամ հատին  
 զգլուխն՝ նա էառ ի ձեռս ժամ մի շրջել  
 շուրջանակի եւ ապա եղ զգլուխն եւ հան-  
 դեաւ: Եւ կայր մէջ եկեղեցոյն զմպէթ մի գե- 30  
 վեցկաշէն ի վերայ ազնիւ մէրմէնէ սեանց.  
 Եւ մէջն մարմին սուրբ առաքելոյն Պօղոսի,  
 աղբի աղբի մեծարանօք եւ արծաթի կանթե- 35  
 ղօք, որ տեսողքն պղուցեալ հային. եւ ի շա-  
 Փաֆէն աչլին խամաշմիչ կու լինի: Անդ ան-  
 կեալ ի վերայ երեսաց երկրպագեցաք, մեղաց  
 թողութիւն խնդրեցաք, մեղ եւ մե'ր ննջեցե- 40  
 լոցն: Եւ ապա գնացաք յաւազ խորանն. եւ  
 յոյժ զարմանալի շէնքեր տեսաք. զի խորնին  
 առջեւն ամէն փուսուսի էր գետինն. եւ աղբի  
 աղբ էր նաշխած ճանաւարք. այլ եւ զՓափի'ն 45  
 մօհն հանած էր. որպէս ի վերայ քարտիգի.  
 քանդի Փափն էր զայն շինել տվել: Եւ թէ  
 հայէր ոք՝ շառաւիղն փայլուն մէրմէնուն  
 յերեսս զարնէր, որպէս վանատիկի Սա Մար- 50  
 ղոյին. ապա բոլորած էր սպէտրով բոլորն,  
 որ մարդ չի մտէր եւ կոխէր ոտամբք, բայց  
 ի քահանայից պատարագէն: Եւ հուպ նմին  
 կայր սուրբ Սաչ խորան մի յոյժ զօրաւոր եւ  
 հրաշալի. ծածկեալ վարագուրով. բայց ամէն 55  
 ուրբաթ բանան եւ երբ ուխտաւորք գան, զի  
 յոյժ սքանչելագործ է: Եւ զբաժ էր թէ կին  
 մի մեծատուն եւ երկիրղած յԱստուծոյ միշտ  
 եւ յարաժամ գայր եւ անկանէր առաջի սուրբ  
 Նշանին, եւ ի խորոց սրտէ աղօթէր լալով եւ  
 բախէր զկուրծան, որպէս մաքսաւորն: Օր մի 60

6 վերեւն: — 12 յոյժմ: — 37 շէնքէր: — 51 երկ-  
 կեղած Աստուծոյ:

55 ճայն եղեւ խաչեալ Միածնէն. եւ ասէ. Ով  
 կին բարեհաւատ, թողցի մեղքն քո: Եւ չի-  
 նած էր զկինն ծնկսած առ սուրբ Սաչն. որ  
 բազում նշանս առնէ եւ կատարէ մինչեւ ցայ-  
 սօր. վասն որոյ յոյժ պատելի, զի աւուրն ուր- 60  
 բաթի անթիւ բազմամբոս ժողով լինի. եւ  
 հարկանեն փոքր գանկակ, բանան զվարա-  
 գոյրն եւ ժողովն անկանին ի վերայ երեսաց  
 իւրեանց, որպէս ի ժամ վերացման մարմնոյ  
 եւ արեանն Քրիստոսի: Եւ կայր ի նմա ութ- 65  
 սուն սիւն մէրմէնէ. զի երկայնածեւ էր նման  
 Բեթղէմի Ծննդեանն, բայց սեւացել էին վասն  
 հնութեանն. եւ մէջ երկոցուն մեծ հոր մի  
 կայր:

SAN PAOLO ALLE TRE FONTANE

Եւ անտի գնացաք երկու միլ, ուր զլիսա- 70  
 տեցին զՊօղոս. եւ քաղքէն չորս միլ. բայց  
 փոքր են նորա միլքն, որպէս մղոնք կամ ծո-  
 վու միլ. եւ նա էր մեծ եւ հին ժամանակաց.  
 զոր եւ անդ երկրպագեցաք: Եւ կայր մերձ  
 եկեղեցի մի փոքր, ուր պատարագի ժամուց 75  
 տային եւ ողորմութիւն. եւ մտեալ աղօթե-  
 ցաք: Անտի երեալ գնացաք Երեք աղբիւրն. եւ  
 նոքա փառաւորք էին եւ գեղեցիկ. զոր մտեալ  
 ի ներս աղօթեցաք. եւ էին աղբիւրքն հուպ  
 միմիանց. այլ եւ արբաք. եւ գանազան էր 80  
 համ նոցա, մինն ջուր, միւսն՝ արիւնհամ,  
 եւ երրորդն՝ կաթնահամ, զոր հիացեալ փառս  
 եւ երրորդն՝ կաթնահամ, զոր հիացեալ սրբոց  
 տվաք Աստուծոյ, որ սքանչելի է վերայ սրբոց  
 իւրոց: Եւ բերած էր սիւն մի անդ ի Յարու- 85  
 թենէն Քրիստոսի. զոր եւ անդ զթէսսրէհնիս  
 շիեցաք: Եւ քանդակեալ էր ի վերայ մար-  
 մարի զլիսատունն Պօղոսի, եւ ահեղակերպ  
 դահիճ մի, ունելով մեծ սուր երկսայրի ի  
 90 սեալ ճէլատն զարհուրեցաւ, անկաւ սուրն ի  
 ձեռաց, ապա սկսաւ ճողել զմօրուքն: Եւ միւս  
 զհին զՊետրոս զլիսիվայր խաչեալ. այն ինճայ  
 հանած էր ողորմելի. զոր տեսողացն էր ող-  
 բալի:

SAN SEBASTIANO

Եւ անտի գնացաք Սան Պաստիան եկե- 95  
 դեցի մի, որ էր անտի նետածիք. եւ ի ճանա-  
 պարհին հանդիպեցաք վանաց մի Աւետում  
 անուն. եւ երկրպագեալ շուքեցաք անտի բա-  
 ղում եւ հասաք ի սուրբն Լուրէնճ, զոր Պուր- 100  
 կէջ քարտիխալն քրոջ որդին Փափին նոր նո-

56 բարէհաւատ: — 57 զոր: — 83, 86, 87 չիք է:  
 — 87 յոստեաւ:

բողել տայր մեծածախ ընչիւք: Եւ շինած էր  
 աւագ խորանին բոլորն գետնէն ի վեր յոյժ  
 ազնիւ մէրմէնի, որպէս հայելիք փայլուն,  
 որ եկեղեցին կ'երեւէր ի նմա. որ մեք ունէաք 105  
 փոքր դաշարիկ մի, որ ամէն հեզ հետ մեզ  
 շրջէր. եւ մերձեցեալ ի մէրմէնս ետես ի նոսա  
 զղէմս իւր. կարծէր թէ այլ շուն, հաջէր ի վե-  
 րայ. զոր հաղիւ լուցուցաք: Եւ ներքեւն կայր  
 մաղարայ մի մեծ իբրեւ զքաղաք. եւ վառեալ 110  
 ջահս իջաք ի ներս. զի ասին թէ ի ժամանակս  
 կոպաչաշուրթեան աստ էր թագուցեալ սուրբն  
 Սեղբեստրոս, եւ բազում սուրբք ընդ նմա.  
 եւ էր յոյժ խոր եւ խաւարչտին. իբրեւ իջաք  
 ին աստիճան, անձուկ եւ նեղ ճանապարհ  
 տեղուջ մտաք. որ եւ կանգուն զնալ չկարա- 115  
 ցաք, այլ կկղելով գլխիվայր: Եւ տեսաք մա-  
 ղարա մի քան զտունն. եւ չորս կողմն փորած  
 էր իբրեւ զգերեզման նեղ, որ եւ գիր կայր  
 հոռմի, զոր մեք ոչ կարացաք կարդալ: Եւ  
 այլ առաջ գնացեալ երկու երեք մաղարայ ալ 120  
 տեսաք. եւ փորած էր մէջն պատերուն, որք  
 էին աղօթատեղիք սուրբ ճգնաւորաց. եւ էր  
 բազում խորածոր գետնափոր, ծերպ եւ այր.  
 ամէն տեղիս աղօթեալ եւ երկրպագեալ՝ դար- 125  
 ձաք ի տուն: Կային եւ այլ բազում վանորայք,  
 բայց ոչ կարացաք ժամանել, զի օրն տարա-  
 ժամեալ էր:

SANTA CROCE

Եւ երկրորդ օրն գնացաք ի Սանթա Գրօչ,  
 որ է Սուրբ Սաչ. եւ անդ է սուրբ Սաչա-  
 փայտն. եւ է քաղքէն ի դուրս. զոր մտեալ ի 130  
 ներս, տեսաք զարմանալի շինուածս. եւ էր  
 յոյժ փառաւոր եւ մեծ. եւ յաւազ խորանն էր  
 պահած Սաչափայտն, ի բարձր տեղուջ. եւ  
 բոլորն նկարած էր զամենայն պատմութիւնս,  
 թէ ո'րպէս գնաց Հեղինէ յերուսաղէմ. եւ 135  
 յորժամ մերձեցաւ ի մեծն Հոռոմ, նա որդին  
 Կոստանդիանոս ել ընդ առաջ նորա բազում  
 քահանայիւք եւ յոքնախումբ ժողովրդովք,  
 այլ եւ շատ հեծեղազօրօք. եւ ինքն զգեցեալ  
 ծիրանիս ականակուռ անգին պճնեալ թագ ի 140  
 գլուխ, հեծեալ ի սպիտակ ձին ոսկիակազմ  
 սանձիւք եւ ակամբ մարգարտովք շարեալ  
 դանդանաւանդօք, խնկօք եւ մոմեղինօք եւ  
 ամենայն զարդիւք, երկրպագեալ սուրբ Սա-  
 չին եւ էառ յաջ ձեռն ի վերայ ձիուն զպար- 145  
 ծանքն Պօղոսի՝ դայր նախ ինքն եւ ապա մայրն  
 զկին. եւ այսպէս մեծաշուք փառօք մտին ի

104 զոր... զոր: — 123 յայր: — 143 դան-  
 դանաւանդօք:

քաղաքն եւ անդ հանդուցին զսուրբ Նշանն եւ շինեցին ի վերայ զեկեղեցիս, ի փառս սուրբ 150 Պաշին. եւ կոչեցին Սուրբ Պաշ. եւ է անդ մինչեւ ցայսօր. զոր եւ մեք արժանի եղեալ բաց աչօք տեսոյ նորա՝ աղօթեալ մեղաց թողութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ծնողաց եւ ամենայն արեան մերձաւորաց եւ երախտաւորաց :

Եւ այսպէս սահմանք է որ ամէն ուխտաւոր զայս եօթն եկեղեցիքս պիտոր քայլեն, զի սորա են մեծ եւ աւագ. իրեքն ի քաղաքն եւ չորսն ի դուրս. բայց բոկ ոտամբ եւ հետիոտս, մեծաւ զղջմամբ եւ հառաչանօք: Բայց իշխանք եւ մեծամեծք ձիօք, ջորօք եւ կառօք չըջին եւ սոցա ճանապարհն ժԸ մղուն է:

DOMINE QUO VADIS

Եւ տեսաք եկեղեցի մի ալ վիմաշէն հին, նման Երուսաղէմայ սուրբ Յարութեանն, Հե- 165 ղինէ շինած. եւ մերձ ի դուռն քաղքին մատուռ մի տեսաք փոքրիկ, որ զԲրիտտոս ընդ Պետրոսի քանդակած էր, իբր թէ զրոյց տային միմիանց. եւ ասին թէ այս այն տեղն է, որ Բրիտտոս Պետրոսի հանդիպեցաւ յորժամ 170 փախչէր երկուցեալ ի Պաշին. եւ տեսեալ զԲրիտտոս ասէ. Ո՛ւր երթաս Տէր իմ. եւ նա ասէ. ի Հոռոմ խաչիլ: Ասէ Պետրոս. Տէր միանգամ խաչեցար եւ դարձեալ կամիս: Եւ ասէ Յիսուս. Իո՞ւ ոչ կամիս խաչիլ. ես վասն 175 քո խաչիմ: Եւ իմացեալ Պետրոս զբանն անկաւ յոտս Յիսուսի եւ ասէ. Տէր իմ եւ Աստուած, ոչ միայն նման քեզ խաչեցայց, այլ գլխիվայր նման Ադամայ: Եւ Յիսուս յայնժամ անյայտ եղեւ: Եւ Պետրոս զօրացեալ դարձաւ 180 ի քաղաքն ուրախութեամբ, զոր կալեալ զնա դահիճքն տարան առ պեղծն Ներոն. եւ նա հրամայեաց խաչել. եւ տարեալ ի տեղին մահապարտաց կամէին խաչել զնա. եւ նա աղաչէր զդահիճան, թէ Մի զիս ըստ Տեառն իմոյ խաչէք գլխիվեր, զի չեմ արժանի, այլ գլխիվայր. եւ անօրէնքն այնպէս արարին: Եւ ինչ 185 բան եւ գործ որ տեղ որ եղել է, նա զամէնն գրած եւ նաչխած եւ քանդակած է եւ եկեղեցիք շինած: Փառք Աստուծոյ անդրաւ: Եւ եկեալ ի տուն հանկաք աւուրս ինչ:

154 յարեան: — 158 յաւագ: — 160 հառաչանօք: — 164 յերուսաղէմայ: — 167 պետրոս քանդած: — 175 յանկաւ:

SAN GIUSEPPE DEI FALEGNAMI, CARCER MAMERTINUS

Եւ զնացաք օր մի ի բանտն Պետրոսի. որ էր փառաւոր եկեղեցի. եւ մտեալ ի ներս տեսաք զընակութիւնս հարեղայից, վայելուչ եւ ծաղկաւէտ իբրեւ զզրախտն Ադամայ: Եւ ցուցին մեզ մատուռ մի գեղեցիկ բոլորածեւ. եւ զդուռն բոլոր երկաթապատ. եւ ասին աստ կան շղթայքն Պետրոսի. եւ խնդրեցաք վանաց հօրէն, որ եբաց մեզ եւ եցոյց մեզ զշղթայս եւ զինճիւն խնկարկութեամբ եւ բա- 10 դում ջահիւք եւ մոմովք, զոր ահիւ եւ զողութեամբ եւ աղօթիւք անցուցին ի վիզս մեր ամենիս: Եւ զայն պահեալ՝ բերին մեզ Անդրէի առաքելոյն խաչափայտն, որ պատած էր խատիճով. զոր խնդութեամբ համբուրեցաք եւ երեսնիս շփեցաք. եւ զի հին էր եւ մաշած, արծաթն անցուցել էին:

Եւ անտի եկաք ի Սան Տօմէնիք. որ եւ սա մեծ եւ փառաւոր եկեղեցի է. եւ լայնա- 20 նիստ, ի բարձր լեռան վրայ, սալարակապ վիմօք: Եւ մերձ այս վանիցս էր վանքն Ալէքսիանոսի ճգնաւորի. եւ մտեալ ի ներս տեսաք զգեղեցկաշէն տաճարն. եւ տարան զմեզ ի խուզն, ուր ժԸ ամ ճգնեցաւ. յորում զրած էր ամէն տնօրինականքն. եւ էին տախտակքն եւ սիւնքն հնացեալ: Եւ անտի տա- 25 րան զմեզ ի զօրաւոր պատկերն Աստուածածնին, ուստի ձայն էլ թէ Մուճէք այսր զմարզն Աստուծոյ. եւ զրած էր զհայր եւ զմայրն. եւ մատուռն ուր ծնողացն գերեզմանքն էին. զոր երկրպագեալ մեղաց թողութիւն խնդրեցաք: Եւ այս վանքեր ամէն ի վերայ լերին էին. եւ զետն առջեւովն կ'երթայր:

Եւ անտի եկաք Գրիգոր Ակոսակօնտացոյն վանքն. եւ տեսաք բանտն եւ աղօթատեղն. եւ ուր պատուհասեցաւ Սարինոս քահանայն եւ Կրիսկիլնոս սարկաւազն եւ ամենայն զրպարտողացն երեսնին սեւ եւ կլափնին բաց եւ մարմինքն ի մէջ հրոյն այրեցեալ. զոր սուրբ գերեզմանն նորա աղօթեցաք: Բայց 30 ոմանք ասեն թէ Ակոսակօն կղզի է մերձ Մալթայու. անդ է գերեզման սրբոյն:

SANT' URBANO

Եւ այլ առաջ զնացեալ տեսաք բոլորածեւ զմայթթաշէն եկեղեցի մի նման թուրքի բա- 40 զանեաց, ներսն որպէս հաւուզ եւ շուրջ զնովալ մէրմէնէ սընեք. եւ Ադամայ մինչեւ ցայ-

7 շեթայք: — 9 զշեթայս: — 11 Անտրէի: — 19 վրա: — 32 կերպար:

սօր ինչ սուրբ որ եղել է եւ ինչ չարչարանք որ կրել է, զամէնն նկարած էր դեղովք ի չորս յորմն, զոր տեսեալ մարդիք զայնպիսի աղիողորմ կսկիծալի դառն տանջանս, զըջայր 50 սիրտն եւ աչացն արտասուս հանէր. զորս ի գլխոյն ի վայր սղոցեալ, զայլս ի մէջ վիմաց եղեալ որպէս ի մամուլս, որ աչվին, ուղեղն եւ աղիքն ի դուրս վազել էր, ոմանց ձեռս եւ եւ աղիքն ի դուրս վազել էր, ոմանց ձեռս եւ 60 քալփաանով ցետեալ, այլոց զընդուն, կիսոց զստինսն ոտս հատեալ, այլոց զընդուն, կիսոց զստինսն զայլս քերանօք քերեալ. եւ զայլս երկաթի զանկօք պատառեալ. եւ զայլսն այլ իմն մահաւոր ի կենաց հանեալ, որպէս զրեալ է ի 70 սատուութիւնս նոցա: Եւ այնպէս հոգեւէր եւ պատմութիւնս նոցա: Եւ այնպէս հոգեւէր եւ աստուածանէրք են, որ զատ մեծ եկեղեցեաց աստուածանէրք են, որ զատ մեծ եկեղեցեաց եւ վանօրէից՝ ամէն փողոցս մատուռն էր 80 շինած, երեք, չորս եւ հինգ եւ մին քան զմին գեղեցիկ եւ պատվական:

ՊԱՆԹՈՆՆ

Եւ անտի մտաք յեկեղեցի մի զմայթթա- 85 շէն կամարակապ, յոյժ լայն եւ մեծ. եւ զմայթթին խուպան տախարակ որպէս մէջլիթն ուն. եւ ասին թէ կռապաշտից շէնք են, զոր ի տօնի կոոցն անդր ժողովէր բազմութիւն արանց եւ կանանց զհօն վիւսայ. եւ այնպէս 90 մեծ հարու է եւ վերին կամարն ի բոլորն հուճուրայք բազում. զոր մարդն մտեալ ի ներսն՝ սասանի. եւ այն առանց սեան, թէպէտ յոլով տեսաք յայլ տեղ՝ Պուրսա եւ Կեսարիայ, ապա 95 սորա պէս ահարկու եւ զարմանալի չկայ. որ այժմ եկեղեցի է եւ անուն Ամենայն սրբոց տօն դրած, զոր առաջն ամենայն դիւսայ օտօնէին: Եւ ի զբոսաց դիհն ի ժամատունն Բ սիւն կայր հասն է երկայն, զոր չափեալ երեք 100 խուլած էլաւ հաստութիւնն, եւ եօթն երկայնութիւնն: Եւ ունէր մեծ գուռ մի երկու փեղկէ մեծ քան զԱյա Սօֆու լայնքն, երեք խուլած եւ երկայնքն հինգ. եւ ազնիւ սփեռով պատած զգուռն, զոր ոմանք ասին թէ 105 ոսկով խառն է. եւ զայս գուռս պիտի գնեն Յարութեան ի ժամանակս քրիստոնէութեան: Եւ հուպ ամին կային եկեղեցիք եօթն միատեղ:

Ապա զնացեալ տեսաք զտարայրն Ուրիա- նոսի, Դիոկղիտիտոսի, Մաքսիմիանոսի, Ներոնի եւ այլ կայսերացն կռապաշտ. բայց 110 աւեր եւ ամայիք էին, միայն հիմունք եւ նշմարանք կ'երեւէր. եւ զայն թողած էր ի

55 բալփատով: — 59 հոգեւէր: — 66 տարարակ: — 74 զոր: — 76 դրաց: — 91 յամայիք:

նշան եւ ի հիացումն տեսողացն մեծամեծ եւ լայնանիստ, մարմար սնեղով, վէմս եւ սայլս 115 եւ քարինս քանդակեալ ի կերպս ազգի ազգի զազանաց եւ վիշապաց եւ հակայից, զոր խախտեալք եւ ցրվեալք էին ի այլ եւ այլ անարգ եւ անպիտան տեղիս:

ԿՈՂՈՍԵՆՆ ԿԱՄ ՓՂԱԵՆԱՆ ԱՄՓԹԵԱՏՐՈՆ  
Եւ կայր սարայ մի այլ, մեծ եւ լայնա- 120 նիստ, բոլորակ որպէս խուլի, բարձրութիւնն տան մարդապօյ. եւ մէջն ամէն տներ կայր. եւ օտանի բոլորն երկու, երեք տակ մինչեւ ի վերն. եւ ամէն սպիտակ մէրմէր էր. եւ ասին թէ աստ զբօսուելին ամենայն թագա- 125 տուողք էին. զի մէջն այժմ զազանք պաւորքն առաջին. զի մատ ասեն զազանաց տառողք էին. զոր եւ աստ ասեն զազանաց արկեալ զիգնատիոս: Այլ եւ տեսաք զսարան կոստանդիանոսի սուրբ թագաւորի. յոյժ գե- 130 ղեցիկ եւ վայելուչ բարձր տեղով, բայց կէսն փլել էր: Եւ մերձ եկեղեցուն էր տունն Պի- ղատոսի որպէս դարպաս, մեծ եւ բազմայար- 135 կեան, զոր փլած էր եւ խոտնոց արած ձիոց եւ երկվարաց: Եւ կայր խաչածեւ ճանապարհ ի վերայ չորս կողմն չորս հակայք մեծամեծք. եւ առաջի նոցա աղբիւրք, որ ի ձեռս իւրեանց 140 ունէին արմաւենիս, այլքն ձիթենիս եւ զայլ ծաղիկս եւ ժժմունս, զոր յառաջն պաշտէին զեռ եւս կռապաշտիցն մնացեալք: Եւ կայր երկու սիւն մեծ մարմարէ, որպէս Ստամպո- 145 լայ Արվատ պաղարին. միոյն վրայ սուրբն Պետրոս բանալին ի ձեռն, եւ միւսն սուրբն Պօղոս ազնիւ սփեռէր ոսկէջրած, հեռու ի միմիանց. միւսն ի մէկ դուռն պարսպին, եւ միւսն ի միւսն, որ հեռատանէ փայլ զփայլի տային:

Եւ Հայոց եկեղեցոյ անունն Սանթա Մա- 150 ռիայ էիբընցա, որ է Մարիամ Եգիպտացի: Եւ օր մի անցաք ի այն կոյս գետոյն միւս կողմն, զի այս ամենայն զոր գրեցաք՝ կէս քաղաքն էր: Եւ տեսաք եկեղեցի մի զարմա- 155 քաղաքն էր: Եւ տեսաք եկեղեցի մի զարմա- նաչէն Յիցիլայ անուն, որ է Կիկիլիայ կոյսն, յոյժ փարթամ եւ հարուստ ժամ. քանտուն մեծ կանթեղ համբեցաք արծաթիս. եւ երեսուն շամտան եւ ամէն շամտանի ներքեւ մին մին արծաթի սկուտեղ. եւ ի գետնափոր յայրն 160 մարմին էր սրբոհոյ կուսին, ներքեւ սեղա- նին, սափի սօմախի մարմարով զուգած որ կարծէր մարդ թէ փայլուն հայելի էր: Եւ այլ

93 մեծամէծ: — 104 սրօսուելին: — 107 գինք- նատիոս: — 115 զոր: — 123 ի միանց: — 124 փայլա- փայլն: — 132 կիկիլայ:

բազում չէնս եւ նկարս տեսաք, զոր ոչ արկաք  
 140 ընդ գրով վասն չճանճրանալոյ կարգացողաց  
 եւ լսողաց: Եւ անտի գնացաք ի վանքն ուր  
 զՊետրոս խաչեցին, որ էր մեծ եւ փառաւոր  
 եկեղեցի ի բարձրաւանդակ տեղով. եւ անտի  
 145 մտեալ ի ներս տեսաք բազում շինուածս. եւ  
 մտեալ ի խաչելութեան տեղն թի աստիճան  
 ի խոնարհ. եւ էր որպէս թուրպայ կամարով.  
 եւ դրսէն սնեռովք զարգարեալ. եւ դեռ այն  
 երկու սիւնն կայր, որոյ վրայ խաչեցին գնա-  
 150 զոր անկեալ ի վերայ երեսաց աղօթեցաք  
 երկրպագութեամբ. եւ մեղաց թողութիւն  
 խնդրեալ մեզ եւ մեր ծնողաց. զարձաք ի  
 տուն:

Եւ այլ օրն եկաք ի վանքն Բարթողի-  
 155 մէոսի առաքելոյ, եւ անդ աղօթեցաք եւ մե-  
 ղաց թողութիւն խնդրեցաք մեզ եւ մերոցն.  
 եւ ելաք ի սեղանն ուր կայր մասն սուրբ մար-  
 փնոյն ի մէջ մէրմէրի սընտրկին, երկաթով  
 պարսպնտած. եւ զիւր ու ցորեկ արծթէ  
 160 կանթեղ կու վառէր ի վրայ: Եւ մերձ այս վա-  
 նիցս՝ հուպ միմիանց չորս վանք կայր, մի  
 քան զմի գեղեցիկ: Եւ այլ բազում վանորայք  
 եւ եկեղեցիք կային, զորս ոչ կարացաք գրել  
 եւ ոչ դնալ:

Եւ այլ յառաջ կայր եկեղեցի մի մեծ՝ Այս  
 165 Սոփու նման, ի մեծ մօյտանն, զոր ունէր  
 հաստ սըներ եւ երկայն: Եւ նետաձիգ մի այլ  
 սուաջ գնացեալ տեսաք աղբեր մի շատրվան,  
 որ իբրեւ զգետ չընչայր. եւ կային մերձ աղ-  
 170 բերն երկու մատակ առիւծք, որ ի բերանոյ  
 նոցա բխէր յորք ջուր. եւ կոխած էր մին  
 կողմն քարէն մեծ եւ մօրվաւոր զՄովսէս  
 մարգարէն, եւ միւսէ զԱհարոն: Եւ հանդէպ  
 նմին եկեղեցի մի ազնիւ՝ Երուսաղէմայ սուրբ  
 175 Յարութեանն նման, չէնքն, ձեւն եւ օրինակն.  
 եւ ի միջի նոցա տեղիք սուրբ գերեզմանին եւ  
 նկարքն ոսկէգիր:

ԱՂԲԵՐԲ ԵՒ ԱԻԱԶԱՆԲ

Եւ կայր ի Հոռոմ աւելի քան տասն հազար  
 չէջմայ, ամէնն գեղեցիկ եւ պատուական,  
 180 հաւուղով եւ շատրվանով. որ եւ նոքա յոյժ  
 ողորմածք եւ զթած: Եւ ամէն աղբիւր ազգ  
 մի թամաշա ունէր. եւ ջուրն երկու, իրեք  
 մղրախ թռչէր: Այլ եւ տեսաք խտուձէտ ա-  
 լաճայ մէրմէրէ մեծ հաւուղ մի որպէս սէնի,  
 185 եւ չափեցաք՝ տասն խուլաճ ելաւ: Եւ այլ  
 զարմանալէն աղբերք կային. ոմանց շատր-  
 վանն մերկ փոքր տղայք ունէին ի վերայ

զլխոց եւ խաղային ծիծաղելով ընդ միմիանս,  
 որպէս կենդանիք. այլ տեղ եղջերք ի վերայ  
 երկու ոտաց վերացուցել են. եւ այլ հաւու-  
 190 զից բոլորն շարել են բազեր, սաղեր, որոց  
 բերանոց ջուր բխէր. եւ այլոց օձիցն պորտայ  
 ջուր ելնէ. եւ ոմանց աղջկանց պորտոյ. եւ  
 ամօթ տեղաց ելնէ ջուր եւ ի ստանց. եւ  
 տղայոցն ծածուկ անդամոց:

Եւ չարչու մի կար մեծ հաւուղ. եւ բո-  
 195 լորն ազգ եւ ազգ ահագնատեսիլ մարդիք եւ  
 զարչատես պառաւք. ոմանք փող հարկանեն,  
 մինչ զի թուչքն ուռուցեալք կարծես եթէ  
 ճշմարիտ փողահար է. բայց աւաղ որ ջուրն  
 200 առ նոսա խըմաթ չունի, միայն գրաստից  
 տան եւ եփելու համար: Եւ երբեմն յամա-  
 ուայնի ի ժամ տօթոյ տեսեալ զստուն եւ զցուրտ  
 ջուրն կամէաք ըմպել. թոյլ չետուն մեզ, թէ  
 չլինի ըմպէք, զի մեռանիք. եւ բերեալ զինի  
 205 տային մեզ: Հազար ափսոս զայն հաւուղին  
 եւ զքաղցրահամ աղբերս եւ ջուրս բարեհամս,  
 որ անդ անարգ է, զի բնաւ չըմպեն ջուր,  
 բայց զինի. եւ ոյլ ըմպէ՝ կարծեն թէ մեռանի  
 210 ջրէն. բայց մեզ կենդանութիւն է ջուրն:

ՁՈՒ ՓԱՓԻՆ Ի Ս. ՊԵՏՐՈՍ ՅԱՒՈՒՐ Ս. ԾՆՆՎԵԱՆ.

Եւ դեկտեմբերի ԻԵ, որ նոցա Յայտնու-  
 215 թիւն է, բերին վարդապետին<sup>1</sup> երկու ձիով ա-  
 րապայ. եւ մեծարեցին ժամն սուրբ Պետրոսի-  
 ուր Փափն պատարագ պիտի առնէր. եւ տե-  
 սաք զի այն օրն զբուն եկեղեցին զարգարած  
 էր դուն զբուն լիպասօք եւ զանազան ծաղկօք  
 եւ կանաչ տերեւովք եւ ոստովք ձիթենօք եւ  
 արմաւենօք: Եւ այնպէս բազում եւ անթիւ-  
 էր ամբոխն, զի ոչ կարացաք մտանել ի եկե-  
 220 ղեցին, մինչեւ սպասաւորք Փափին մերժե-  
 լով զժողովուրդն հաղիւ կարացին մուծանել  
 զմեզ մերձ առ Փափն. եւ տեղին ուր Փափն եւ  
 զարտնալքն էին, մեծ եւ լայնանիստ ի յաւազ  
 խորանն, որպէս եկեղեցի մի, եւ բոլորն պատ-  
 էր քաչած մուշապախ ժողովուրդին զիհաց,  
 225 զի ամբոխն չի նեղէ զՓափն: Բացին զբուն  
 եւ մեք մտաք ի ներս. եւ զուզած էր Փափին  
 տեղն ինն աստիճան բարձր քան զայլոց. եւ  
 ի վերայ զլխուն զմպէթ ազնիւ եւ զարմանա-  
 չէն: Եւ էր նստեալ մեծագին ոսկիակազմ ա-  
 230 թոս: Եւ կայր մատուռն այն վեց սիւն, սուրբ  
 յերուսաղէմայ բերած. որն սուրբ Յակոբայ,

195 յանդամոց: — 207 բարէհամ: — 208 չմպեն:  
 6 բուն: — 7 տերեւովք: — 8 յարմաւենօք: —  
 12 չիֆ առ: — 16 յամբոխն:

<sup>1</sup> Այս ինքն՝ Չաքարիա Վարդապետի վանեցոյ:

զորն Սողոմոնի տաճարէն: Եւ այն սնեռուն  
 վերայ գմպէթ էր եւ մէջն սեղան. եւ սեղնին  
 35 առջեւն ասլըրէմէ մեծ տիվան խալի մի  
 սիւրած էր, մեծագին: Եւ այն տեղն շինած  
 էր երեքտակ, բոլորն ամէն նստատեղ. ներ-  
 քին քորեպիսկոպոսաց, որ կոչին պօնսինօք.  
 միջինն վասն արքեպիսկոպոսաց եւ վերինն  
 30 վասն գարտինալաց: Եւ իբրեւ անցաւ ժամ մի՝  
 բերին Փափին չորս թագ զարմանալի. երկուսն  
 փափուկ որպէս մերս. եւ երկուսն՝ բոլորա-  
 ման արագեալք. որպէս սաղաւարտ, եւ  
 ձեւ, երեքյարկեան որպէս սաղաւարտ, եւ  
 35 ի նմա, լալ, ալմաս, զըմբութ, եազութ: Եւ  
 ասին թէ մէկ թագն հարիւր հազար Ֆլորի  
 կաթէ: Եւ կայր ի վերայ սեղանին երկոտա-  
 սան առաքեալք. արծաթէ թափած մարդա-  
 չափ. եւ բազում շամատանք արծթէ մեծա-  
 40 մեծք, ոսկի սրկիք աղամբք եւ մարգարտովք  
 ընդելուզեալ. եւ այլ անթիւ սպասք եւ ա-  
 նօթք. մինչ զի կայծառք, լականք, ջրամանք,  
 կրակամանք արծաթի էին, յորոց վրայ մինչ-  
 45 խաչ մի մեծ ի վերայ երկայն ձողոյ, բուն  
 պատանդանն եւ ոստն արծթէ. եւ կանգնե-  
 Փափն կու գայ. զի ամէն տեղ խաչն է Փա-  
 փին կարապետ: Եւ զինուորքն զամբոխն  
 50 ցրվէին շաւիղ առնելով: Ապա սկսան նախ իչ-  
 խանքն գալ. եւ զինի քահանայք եւ կարգա-  
 տօրք. ապա եպիսկոպոսք, զինի պօնսինօք.  
 եւ ապա զարտինալք. եւ յետ ամենայնի  
 Փափն: Եւ էր նստեալ ի մաֆան վեց եպիսկո-  
 55 պոսաց բարձեալ: որպէս Հայք ի մեծի աւազ  
 հինգչաբաթին յոտն լուսայնապետն. զի այսպէս է  
 սովորութիւն, յորժամ յեկեղեցիս երթայ,  
 մարդիք բառնան. իսկ այլ տեղ ջորովք: Եւ  
 60 ուր մերձէր՝ անկանէին ի ծունկս եւ զլուխս  
 խոնարհեցուցեալ աղաղակէին ասելով. Օր-  
 հնեա՛ սուրբ Հայր: Եւ նա ի վերուստ խա-  
 չանքէր եւ օրհնէր: Եւ եկեալ առաջի սեղա-  
 65 նոյն էլ յաթոռոյն եւ ծունկս եւ զլուխս  
 եւ երկրպագեալ զարձաւ ի ժողովուրդն, խաչ  
 նեքին երկիր պագին նմա. եւ տարեալ հան-  
 դուցին գնա ի սահմանեալ տեղին: Եւ իբրեւ  
 բազմեցաւ՝ նախ ներքին եպիսկոպոսքն ելեալ  
 70 գնացին եւ համբուրեցին զոտն Փափին.

ընդ կրունկս յետ եկեալ նստան. ապա ելին  
 պօնսինօք. եւ զծունկն համբուրեցին. ապա  
 զարտնալքն զայն համբուրեցին: Եւ իբրեւ  
 կատարեցաւ ողջոյն, ազուցին Փափին շուր-  
 75 ջառ մի որպէս փիլոն, յոյժ մեծագին գնով.  
 զոր իւրեանց լեզուաւ «ալթէմպաս» կոչեն.  
 կանդունն երեքհարիւր զուռուչ. սպիտակ  
 իբրեւ զձեռն, զոր փայլէր որպէս հայելի. եւ  
 ունէր խաչաձեւ կոճակ մի եւ մէջն ակն մի  
 80 զմբուխտ անգին. եւ գլուխն եղին թագ մի  
 կամարաձեւ երեքյարկեան, ազնիւ եւ ան-  
 գիւտք. եւ ունէր մասն ոսկի մատանի արմաս  
 ակնով, որ վառէր իբրեւ զճրագ: Ապա սկսան  
 դարանալք, զինի եպիսկոպոսք, ապա պօն-  
 85 սինօք շուրջապոլորիլ. եւ կանգնեալ յոտին  
 եղին զթագս ի գլուխս Փափին բոլորով: Եւ  
 մերձ Փափին յաջ գիհն Սպանիու թագաւորին  
 քի ամենայն թագաւորք վէքիլ ունին մօտ Փա-  
 90 վին, սիրոյ եւ հնազանդութեան սակի. եւ  
 ամէն իրեք տարի փոխին, որպէս Ստամպոլ  
 եւ ի Հալապ. եւ լուցեալ ջահս եւ լապտերս  
 եւ սպիտակ մոմս եւ կերոն:

Եւ յորժամ աղօթէր Փափն կամ աւետա-  
 95 րան կարգայր, ամենեքին երկիր պագանէին:  
 Եւ էր պօնսինօրաց թագն թաճն միափերթ եւ  
 տափակ մին խաչիւ. եւ արքեպիսկոպոսացն  
 բաց եւ տափակ երկու խաչիւ. իսկ զարտ-  
 նալաց երկձողի եւ այլ պատվական: Եւ յոր-  
 ժամ կացին աղօթս ընդ Փափին եւ բոլորեալ  
 100 պար առնէին՝ բազմութիւն թագից պաղպա-  
 ջուռն ահացուցանէր զտեսողս, զի նման էր ա-  
 հագին ատենին: Եւ յորժամ սկսաւ Փափն  
 պատարագել, եւ դպիրքն եղանակէին: Այլ եւ  
 105 ունէր Փափն վարպետ մի եւ ժամատաց, դա-  
 տրմ մի որ խոտ անուչ ձայն ունէր, նման  
 չրեշտակաց կամ թէ Մամատայ. եւ յորժամ  
 հրեշտակաց կամ թէ Մամատայ. եւ ասին թէ սա յի-  
 նա երգէր՝ այլքն լռէին. եւ ասին թէ սա յի-  
 սուն զեկան ոսկի ունի օլօֆայ ի Փափէն ա-  
 110 մէն շարաթ: Եւ այսպէս ամէն եկեղեցի կայ  
 վարպետ մի քաղցրանուազ, բայց սորա նման  
 չտեսաք. ով ոք լսէ՝ զմայլի եւ թըմրի: Իսկ  
 հնչմունք զանկակաց եւ ձայն երգէհոնաց,  
 115 փողոց, թմպկաց եւ այլ նուազարանաց լսելի  
 լինէր ի քաղաքն ամենայն. եւ խլացուցանէր  
 հոգով եւ մարմնով մարդիք:

Եւ իբրեւ կատարեաց զսուրբ պատա-  
 րագն՝ հաղորդեցոյց զիչխանս եւ զորս ինքն

89 փափն... հնազանդութեամբ:

24 վերա: — 33 յերեցարկեան: — 46 պատան-  
 տանն: — 49 զամփոխն: — 61 օրհնայ: — 67 հան-  
 կուցին:

